## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 օգոստոսի 2024 թվականի թիվ 503-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի օգոստոսի 27-ի նիստում, քննարկելով անհատ ձեռնարկատեր Տիգրան Թորոսյանի (այսուհետ նաև՝ **ԱՁ Տ. Թորոսյան**) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

***1. Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 16-ի «Անհատ ձեռնարկատեր Տիգրան Թորոսյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 425-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 425-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-03189/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Հանձնաժողովը 2024 թվականի օգոստոսի 6-ին ընդունել է «Թիվ ՀԳ-03189/24 վարույթով պատասխանող անհատ ձեռնարկատեր Տիգրան Թորոսյանի կողմից ներկայացված միջնորդությունը բավարարելու և արագացված վարույթ կիրառելու մասին» թիվ 464-Ա որոշումը (այսուհետ նաև՝ **թիվ 464-Ա որոշում**):

***2. Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.***

Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչությունը (այսուհետ նաև՝ **Վարչություն**) 2024 թվականի հուլիսի 12-ի թիվ ՄՊՀ-007979 զեկուցագրով առաջարկել է ԱՁ Տ. Թորոսյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Վարույթը հարուցվել է «տոմատի մածուկ» անվանումով ապրանքը ««AS FOOD» ապրանքային նշանով և «արտադրող՝ «ԱՍ ՖՈՒԴ»» գրառմամբ իրացնելու առնչությամբ ԱՁ Տ. Թորոսյանի վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ շփոթության առաջացման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

***3. ԱՁ Տ. Թորոսյանի դիրքորոշումը.***

ԱՁ Տ. Թորոսյանը թիվ 425-Ա որոշումը ստացել է 2024 թվականի հուլիսի 22-ին և 2024 թվականի օգոստոսի 2-ին ներկայացրել է միջնորդություն (այսուհետ նաև՝ **Միջնորդություն**)՝ հայտնելով, որ ընդունում է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը:

Միաժամանակ ԱՁ Տ. Թորոսյանը հայտնել է, որ թիվ 425-Ա որոշման մեջ նշված տոմատի մածուկի արտադրությունն ու իրացումը դադարեցրել է, իսկ մնացորդ առկա չէ:

***4. Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը.***

1. Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի ապրիլի 1-ի «Հսկիչ գնում իրականացնելու մասին» թիվ 201-Ա հրամանի հիման վրա «Զոլէքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող առևտրի օբյեկտում իրականացվել է հսկիչ գնում (այսուհետ նաև՝ **Հսկիչ գնում**), որի արդյունքում 2024 թվականի ապրիլի 1-ին կազմվել է «Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ» թիվ 201 արձանագրությունը:

Հսկիչ գնման արդյունքում ձեռք է բերվել «Աս ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից 2023 թվականի հոկտեմբերի 10-ին արտադրված «AS FOOD» ապրանքային նշանով 1000 գ քաշով թվով 4 հատ տոմատի մածուկ:

«AS FOOD» ապրանքային նշանով տոմատի մածուկի տարային փակցված պիտակի վրա առկա է հետևյալը. «AS FOOD ՏՈՄԱՏԻ ՄԱԾՈՒԿ, 10 OCT. 2023: Տոմատի մածուկ, բաղադրությունը՝ մածուկ թարմ լոլիկներից: Պատրաստված է թարմ և էկոլոգիապես մաքուր լոլիկներից: Պարունակությունը՝ 1000գ մթերքում-էներգետիկ արժեքը 79կկալ/331կՋոուլ, ածխաջրեր 15.8գ, ճարպեր 0գ: Վիտամիններ՝ կարոտին 1.9 մգ, B1-0.1 մգ PP-1.2մգ, C-34 մգ: Պահպանման ժամկետը 2 տարի: +5°C +20°C օդի հարաբերական խոնավության 75%-ից 80% պայմաններում: Զտաքաշը 1000 գր: Արտադրող «ԱՍ ՖՈՒԴ»: Հասցե՝ Նորագավիթ 10 փ., տուն 2: Հեռախոս +37494706317 (այսուհետ նաև՝ **Ապրանք**)»:

2. Ընկերությունը 2024 թվականի հունիսի 19-ի գրությամբ հայտնել է, որ վերջինս չի զբաղվում տոմատի մածուկի արտադրությամբ կամ ներմուծմամբ և երբևէ չի զբաղվել նման արտադրատեսակների արտադրությամբ, արտադրություն կամ ներմուծում առհասարակ չի իրականացնում: Ընկերության գործունեությունը միայն հանրային սնունդի ոլորտում է: Ընկերությունը ունի փոքրիկ բանվորական ճաշարան ֆուդ կորտ: Ամենայն

հավանականությամբ տեղի ունեցածը շփոթմունք է, գուցե տոմատի մածուկ արտադրող ընկերության ֆիրմային անունը համընկնում է Ընկերության անվանման հետ:

3. Վարչության կողմից Ապրանքի վրա առկա դրոշմապիտակի «Թաքս Սթամփ» ծրագրի միջոցով իրականացված սկանավորման արդյունքում պարզվել է, որ Ապրանքն արտադրվել է ԱՁ Տ. Թորոսյանի կողմից (ՀՎՀՀ՝ 35199109), հասցե՝ Երևան, Շենգավիթ թաղամաս Նորագավիթ 10փ., 2/2:

4. Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի հուլիսի 18-ի թիվ 8288 գրությամբ Հանձնաժողովը դիմել է ՊԵԿ-ին՝ խնդրելով տրամադրել ԱՁ Տ. Թորոսյանի կողմից 2023 թվականին հաշվարկային փաստաթղթերի և ՀԴՄ կտրոնների միջոցով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՊԵԿ-ը 2024 թվականի հուլիսի 29-ի գրությամբ տրամադրել է հայցված տեղեկատվությունը, որի համաձայն՝ ԱՁ Տ. Թորոսյանի 2023 թվականին «Տոմատի մածուկ» ապրանքատեսակի իրացումից ստացված հասույթի չափը կազմում է

***5. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.***

1. Վարույթը հարուցվել է «տոմատի մածուկ» անվանումով ապրանքը ««AS FOOD» ապրանքային նշանով և «արտադրող՝ «ԱՍ ՖՈՒԴ»» գրառմամբ իրացնելու առնչությամբ ԱՁ Տ. Թորոսյանի վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ շփոթության առաջացման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ առերևույթ առկայության հիմքով:

2. ԱՁ Տ. Թորոսյանն ընդունել է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը՝ հայտնելով, որ Ապրանքի արտադրությունն ու իրացումը դադարեցրել է, իսկ մնացորդ առկա չէ:

3. Հանձնաժողովը թիվ 464-Ա որոշմամբ բավարարել է Միջնորդությունը և կիրառել է արագացված վարույթ:

4. Հսկիչ գնմամբ Ապրանքը ձեռք է բերվել 2024 թվականի ապրիլի 1-ին:

ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ԱՁ Տ. Թորոսյանի 2023 թվականի «Տոմատի մածուկ» ապրանքատեսակի իրացումից ստացված հասույթի չափը կազմում է

***6. Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.***

***1) ԱՁ Տ. Թորոսյանի կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.***

Վարույթը հարուցվել է «տոմատի մածուկ» անվանումով ապրանքը ««AS FOOD» ապրանքային նշանով և «արտադրող՝ «ԱՍ ՖՈՒԴ»» գրառմամբ իրացնելու առնչությամբ ԱՁ Տ. Թորոսյանի վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ շփոթության առաջացման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ առերևույթ առկայության հիմքով:

Վերոգրյալի համատեքստում էական է անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

***1. <u>Ի՞նչ նպատակ է հետապնդում ապրանքային նշանին իրավական պահպանության տրամադրումը:</u>***

***2. <u>Արդյո՞ք ԱՁ Տ. Թորոսյանի կողմից «AS FOOD» ապրանքային նշանի և «արտադրող՝ «ԱՍ ՖՈՒԴ»» գրառման օգտագործումը կարող է շփոթություն առաջացնել Ընկերության, նրա գործունեության և առաջարկած ապրանքների նկատմամբ:</u>***

***<u>Առաջին հարցադրման կապակցությամբ.</u>***

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մտավոր սեփականության օբյեկտներ են մտավոր գործունեության արդյունքները և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցներ են ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները (սպասարկման նշանները), աշխարհագրական նշումները, ծագման տեղանունները և երաշխավորված ավանդական արտադրանքի անվանումները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքային և սպասարկման նշանը (այսուհետ՝ ապրանքային նշան) այն նիշն է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայությունները այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի օգտագործում է համարվում՝

1) այդ ապրանքային նշանի զետեղումն ապրանքների կամ դրանց փաթեթավորման վրա, ինչպես նաև դրա օգտագործումը որպես այդ ապրանքների փաթեթավորում՝ եռաչափ ապրանքային նշանի դեպքում.

2) այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների վաճառքի առաջարկը, դրանց վաճառքը կամ այդ նպատակով պահեստավորումը կամ այդ ապրանքային նշանով ծառայության մատուցումը կամ դրա առաջարկը.

3) այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների ներմուծումը կամ արտահանումը.

4) այդ նիշի կիրառումը փաստաթղթերի վրա կամ գովազդի նպատակով.

5) այդ ապրանքային նշանի օգտագործումն ինտերնետային կամ հեռահաղորդակցության համաշխարհային համակարգչային այլ ցանցերում,

մասնավորապես հացեագրման ցանկացած միջոցներում, այդ թվում՝ դոմեն անվանումներում.

6) սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված նպատակներով ապրանքային նշանի բազմացումը, պահեստավորումը կամ վաճառքը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մտավոր գործունեության արդյունքների կամ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների (այսուհետ՝ անհատականացման միջոցներ) նկատմամբ գույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի:

Այսպես, Սահմանադրական դատարանը 2019 թվականի ապրիլի 23-ի ՍԴՈ-1455 որոշմամբ արձանագրել է, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ամրագրման և դրա պաշտպանության իմաստը կայանում է նրանում, **որ սպառողներին հնարավորություն է տրվում տարբերակել շուկայում առկա ապրանքները**՝ թույլ չտալով երրորդ անձանց ապօրինի օգտագործել գրանցված ապրանքային նշանը, ինչի արդյունքում պաշտպանվում են ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքներն ու շահերը: Այդ պատճառով օրենսդիրն արգելում է ոչ միայն արդեն իսկ գրանցված ապրանքային նշանի ապօրինի օգտագործման հնարավորությունը, այլ նաև այնպիսի ապրանքային նշանների օգտագործումը, որոնք նմանության պատճառով կարող են շփոթության մեջ գցել սպառողներին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ ՎԴ/4241/05/11 վարչական գործով արձանագրել է, որ ապրանքային նշանի իրավական պահպանությունը նպատակաուղղված է կանխելու անարդար մրցակցությունը, երաշխավորելու ներդրումների պաշտպանվածությունը, ինչպես նաև սպառողներին զերծ պահելու կեղծ կամ ապակողմնորոշող գովազդից, անորակ ապրանքներից կամ ծառայություններից:

Այսպես, Հանձնաժողովն արձանագրում է, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ամրագրումը և դրա պաշտպանությունը, ի թիվս այլնի, հետապնդում են հետևյալ հիմնական նպատակները.

1. շուկայում առկա ապրանքների տարբերակման հնարավորություն սպառողների համար,
2. անարդար մրցակցության կանխում,
3. ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքների ու շահերի պաշտպանություն,
4. գրանցված ապրանքային նշանի՝ երրորդ անձանց կողմից ապօրինի օգտագործման կանխարգելում:

***<u>Երկրորդ հարցադրման կապակցությամբ.</u>***

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար

շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 16-24-րդ հոդվածներում նկարագրված իրավախախտումների հատկանիշների առկայության հարցը գնահատում է Հանձնաժողովը:

Վերոնշյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է գործողությունն անբարեխիղճ դիտարկելու երկու եղանակ. մի դեպքում անբարեխիղճ մրցակցության դեպքերն են Օրենքի 16-24-րդ հոդվածներով սահմանված առանձին դրսևորումները, մյուս դեպքում՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշները պարունակող գործողությունները, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը.

1. հակասում է Օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

2. խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում այնպիսի անվանման, նշանի, նիշի, հնչյունի կամ բառի օգտագործումը, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը:

Վերոգրյալ նորմերից բխում է, որ օրենսդիրը անբարեխիղճ մրցակցության առաջացման պայման է սահմանել տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացումը կամ դրա հնարավորությունը, որը, ի թիվս այլնի, դրսևորվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող կամ այլ կերպ շրջանառության մեջ դրված ապրանքների, դրանց փաթեթավորումների կամ պիտակների վրա կամ ապրանքին առնչվող այլ տեղեկատվության մեջ կամ ինտերնետային դոմենի անվանումներում կամ գովազդում

այնպիսի անվանման, նշանի, նիշի, հնչյունի կամ բառի օգտագործմամբ, որը նույնական կամ շփոթելու աստիճանի նման է այլ տնտեսավարող սուբյեկտի՝ Հայաստանի Հանրապետությունում պահպանվող կամ նրա կողմից ավելի վաղ օգտագործվող կամ հանրահայտ ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը:

Վերոշարադրյալի լույսի ներքո Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

ԱՁ Տ. Թորոսյանը 2024 թվականի օգոստոսի 2-ի միջնորդությամբ ընդունել է Վարույթով իրեն վերագրվող իրավախախտման փաստը՝ հայտնելով, որ Ապրանքի արտադրությունն ու իրացումը դադարեցրել է, իսկ մնացորդ առկա չէ:

Հանձնաժողովը թիվ 464-Ա որոշմամբ բավարարել է Միջնորդությունը՝ կիրառելով արագացված վարույթ:

Օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, իսկ սույն օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետի երկարաձգման դեպքում երկարաձգված ժամկետում վարույթով պատասխանողը իրեն վերագրվող իրավախախտման հետևանքները վերացրած լինելու և իրավախախտման փաստն ընդունելու, իսկ սույն օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում միայն իրավախախտման փաստն ընդունելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով: Այն դեպքում, երբ իրավախախտման հետևանքները վերացնելն անհնար է, իրավախախտման հետևանքները վերացված լինելու պայմանը իրավախախտման փաստի ընդունման դեպքում համարվում է առկա:

Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացվելու դեպքում վարույթով պատասխանողը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը:

Օրենքի 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթ կիրառելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի՝ ըստ էության քննությանն ուղղված գործողություններ չեն իրականացվում, և գնահատվում են միայն պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը հաստատված է համարում, որ ԱՁ Տ. Թորոսյանի կողմից «Աս Ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից օգտագործվող «AS FOOD» անվանումով ապրանքային նշանին նույնական «AS FOOD» ապրանքային նշանի, ինչպես նաև «արտադրող՝ «ԱՍ ՖՈՒԴ»» գրառման օգտագործումը ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ պարունակում է շփոթության առաջացման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ, որի կապակցությամբ օրենսդրությամբ նախատեսված է իրավական հետևանք՝ պատասխանատվության միջոցի կիրառում:

***<u>2) ԱՁ Տ. Թորոսյանի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցի կապակցությամբ.</u>***

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, պատասխանատվությունից ազատելու հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը և տնտեսավարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 88-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը սահմանում է պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը:

Օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանվում է Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանելու մասին» թիվ 395-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 395-Ն որոշում**) սահմանված պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանության (այսուհետ նաև՝ **Մեթոդաբանություն**) 1-ին կետի համաձայն՝

պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը կարգավորում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառում պատասխանատվության միջոցների ընտրության և տուգանքի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

Մեթոդաբանության 9-րդ կետի համաձայն՝ տուգանքը հաշվարկում է հետևյալ բանաձևով.

Տ = Բ + Բ x (Ծ - Մ)

Որտեղ՝

Տ-տուգանքի չափն է,

Բ-տուգանքի բազային գումարը,

Ծ-ծանրացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը,

Մ-մեղմացնող բոլոր հանգամանքների համար սահմանված տոկոսների հանրագումարը:

***<u>Բազային գումարի հաշվարկը.</u>***

Մեթոդաբանության 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող մեթոդը վերաբերում է անբարեխիղճ մրցակցությանը, բացառությամբ ակցիաների:

Մեթոդաբանության 21-րդ կետի համաձայն՝ երկրորդ խումբ իրավախախտումների դեպքում կիրառվող տուգանքի բազային գումարը հաշվարկվում է Բ = Հ x 2.5% x Ժ բանաձևով որտեղ՝

Բ-ն տուգանքի բազային գումարն է,

Հ-ն ապրանքի իրացումից ստացված հասույթն է կամ ընդհանուր հասույթի կեսն է,

Ժ-ն իրավախախտման տևողության գործակիցն է:

Մեթոդաբանության 22-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք ընդունվող հասույթի ընտրությունն իրականացվում է Մեթոդաբանության 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով:

Մեթոդաբանության 15-րդ կետի համաձայն՝ բազային գումարի հաշվարկման համար հիմք է ընդունվում ապրանքի իրացումից ստացված հասույթը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը տուգանքի բազային գումարը հաշվարկելիս որպես ապրանքի իրացումից ստացված հասույթ դիտարկում է ԱՁ Տ. Թորոսյանի 2023 թվականի «Տոմատի մածուկ» ապրանքատեսակի իրացումից ստացված հասույթի չափը, որը կազմում է ՀՀ դրամ:

*Իրավախախտման տևողությունը.*

Իրավախախտման տևողությունը հաշվարկելիս հիմք են ընդունվում Մեթոդաբանության 22-րդ և 23-րդ կետերը:

Տվյալ դեպքում իրավախախտման սկզբնաժամկետ է համարվում

Վերոնշյալից բխում է, որ տուգանքի բազային գումարը կազմում է ՀՀ դրամ՝ ըստ հետևյալ հաշվարկի.

Բ= Հ x Խ x Ժ= 4 529 400 x 2.5% x 1 = 113 235 ՀՀ դրամ:

*Պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հանգամանքներ.*

***<u>Տուգանքի հաշվարկը.</u>***

Վերոշարադրյալից հետևում է, որ տուգանքի չափը կազմում է ՀՀ դրամ՝ համաձայն հետևյալ հաշվարկի.

Տ= Բ + Բ x (Ծ - Մ) = ՀՀ դրամ:

Մեթոդաբանության 47-րդ կետի համաձայն՝ արագացված վարույթի կիրառման արդյունքում տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է Մեթոդաբանությամբ հաշվարկված տուգանքի 50 տոկոսը: Այսինքն, ԱՁ Տ. Թորոսյանի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է ՀՀ դրամ:

Մեթոդաբանության 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը տալիս է նախազգուշացում, եթե իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը հաշվարկման արդյունքում հավասար է կամ չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվարկված տուգանքի գումարը՝ ՀՀ դրամը, փոքր է 250 000 ՀՀ դրամից, Հանձնաժողովը գտնում է, որ ԱՁ Տ. Թորոսյանի նկատմամբ կիրառելի է պատասխանատվության միջոցի նախազգուշացում տեսակը:

***3) <u>ԱՁ Տ. Թորոսյանին հանձնարարություն տալու հարցի կապակցությամբ</u>.***

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը (...) սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի թիվ 464-Ա որոշմամբ կիրառվել է արագացված վարույթ՝ Հանձնաժողովը գտնում է, որ ԱՁ Տ. Թորոսյանին հանձնարարություն տալու անհրաժեշտությունը բացակայում է:

***7. Եզրափակիչ մաս.***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, 88-րդ հոդվածի 6-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ, 71-րդ հոդվածներով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Անհատ ձեռնարկատեր Տիգրան Թորոսյանի կողմից «Աս Ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից օգտագործվող «AS FOOD» անվանումով ապրանքային նշանին նույնական «AS FOOD» ապրանքային նշանի, ինչպես նաև «արտադրող՝ «ԱՍ ՖՈՒԴ»» գրառման օգտագործումը ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ որակել որպես շփոթության առաջացման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցություն (այսուհետ նաև՝ **Օրենքի խախտում**):
2. Օրենքի խախտման համար անհատ ձեռնարկատեր Տիգրան Թորոսյանին տալ նախազգուշացում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը անհատ ձեռնարկատեր Տիգրան Թորոսյանին հանձնելուն հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը կամ կատարումը:

**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2024 թ. օգոստոսի 27

Երևան